

**ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N**

ք.Երևան

թ.

\_\_\_\_\_, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «Մարուքյաններ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն Մնացական Մարուքյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան**

- 1.1. Պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար՝ տրամադրելով համապատասխան փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են դրանց իրականացման համար:
- 1.2. Կատարողը պարտավորվում է մատուցել Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող հավելվածում (այսուհետ՝ Հավելված) նշված ծառայությունները:
- 1.3. Ծառայություններն իրենց մեջ կարող են ներառել գիշերակաց որևէ հյուրանոցային տնտեսության օբյեկտում (հյուրանոց, առողջարան, հանգստյան տուն, հյուրատուն), տրանսֆեր, ավիատոմս, էքսկուրսիա /տուր/:
- 1.4. Ծառայությունների մատուցման ժամկետը սահմանվում է Հավելվածում:
- 1.5. Ծառայությունները համարվում են մատուցված հավելվածում նշված ծառայությունների ժամկետի ավարտի պահից:
- 1.6. Կատարողը՝ որպես զբոսաշրջային գործակալ (ենթագործակալ), պարտավորվում է Պատվիրատուին մատուցել զբոսաշրջային ծառայություններ:

**2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները**

**2.1 Կատարողը պարտավոր է՝**

- 2.1.1 Ծառայությունները մատուցել պատշաճ որակով և ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.4 կետում նշված ժամկետում՝ համաձայն իր կողմից սահմանված ընթացակարգի.
- 2.1.2 Կատարողը Պատվիրատուի պատվերն ընդունում և հաստատում է սվյալ ժամանակահատվածում հյուրանոցում առկա ենարավորությունների սահմաններում:

**2.2 Կատարողն իրավունք ունի**

- 2.2.1 Միակողմանիորեն հրաժարվել Պայմանագրի կատարումից Պատվիրատուի կողմից (նախապես պայմանավորված) վճարումները ժամանակին չկատարելու դեպքում՝ վերջինից պահանջելով կրած վնասների հատուցում.
- 2.2.2 Փոփոխել ծառայությունների արժեքը՝ կախված մատուցվող ծառայության ներկայացված սակագների փոփոխություններից, այդ մասին անհապաղ տեղյակ պահելով Պատվիրատուին:

**2.3 Պատվիրատուն պարտավոր է՝**

- 2.3.1 Ժամանակավոր կացության և տարանցիկ վայրերում՝ պահպանել Պայմանագրով նախատեսված պայմաններն ու կանոնները,
- 2.3.2 չխախտել հասարակական կարգը, պահպանել հրդեհային անվտանգության կանոնները և կատարել ժամանման երկրի տարածքում գործող օրենքների պահանջները:

**2.4 Պատվիրատուն իրավունք ունի**

- 2.4.1. Ժամանակավոր կացության և տարանցիկ վայրերում ստանալ Պայմանագրով և շրջագայության ծրագրով նախատեսված զբոսաշրջային համալիր ծառայությունները,
- 2.4.2. ստանալ անձնական անվտանգության, կյանքի, առողջության, սպառողի իրավունքների պաշտպանություն,
- 2.4.3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան՝ Կատարողի կողմից Պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում,
- 2.4.4. Պատվիրատուն իրավունք ունի մեկնումից առաջ հրաժարվել պատվերից՝ վճարելով համապատասխան տուգանքներ՝ կախված մատուցվող ծառայության տեսակից, ինչպես նաև տոմսի արժեքը՝ կախված դրա տեսակից /վերադարձման ենթակա տոմսեր և վերադարձման ոչ ենթակա տոմսեր/:

### 3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Պայմանագրի գինը, մատուցման ենթակա ծառայությունները, դրանց իրականացման ժամկետները, հաշվարկները նշվում են Հավելվածում:

3.2. Պատվիրատուն, Կատարողի հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի գինը ամբողջական փոխանցումով (կամ պարբերական փոխանցումով) վճարում է բանկին և բանկի կողմից վավերացված վճարման հանձնարարագիրը տրամադրում է Կատարողին կամ կատարում է վճարում կանխիկ եղանակով՝ Պատվիրատուի դրամարկղ:

### 4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պայմանագիրը Պատվիրատուի նախաձեռնությամբ վաղաժամկետ դադարեցնելու կամ Պատվիրատուի կողմից իր մեղքով Հավելվածով նախատեսված ծառայություններից չօգտվելու դեպքում՝ նրա նկատմամբ կիրառվում է տուգանք՝ կախված մատուցման ծառայության տեսակից:

4.2. Կատարողի՝ օրենքին հակասող գործողություններով Պատվիրատուին հասցված վնասը ենթակա է հատուցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.3. Կատարողը պատվիրատուին մատուցում է երրորդ անձանցի /Պրինցիպալի/ հետ կնքված պայմանագրով նախատեսված ծառայություններ և պատասխանատու է միայն այդ ծառայությունների մատուցման համար: Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել Կատարողի կողմից մատուցվող ծառայություններից, եթե համաձայն չէ դրանց պայմանների հետ:

4.4. Կատարողը պատասխանատու չէ համապատասխան Պրինցիպալի կողմից մատուցված ծառայությունների հրապարակային պայմանագրից կամ դրա պայմաններից տարբերվող, Պատվիրատուի համար ոչ բարենպաստ պայմաններով ծառայությունների փաստացի մատուցման համար, որոնց մասին Կատարողը նախապես չէր կարող և պարտավոր չէր տեղյակ լինել:

4.5. Պատվիրատուի կողմից սեփական կամքով և նախաձեռնությամբ Հավելվածում նշված, Կատարողի կողմից տրամադրված և Պրինցիպալի կողմից մատուցված ծառայություններից չօգտվելու կամ ոչ ամբողջ ծավալով օգտվելու դեպքում Կատարողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից չստացված ծառայությունների մասով համապատասխան գումարի չափով փոխհատուցում տրամադրելու համար:

4.6. Ժամանակավոր կացության, այցելության և տարանցիկ վայրերում Պատվիրատուն կրում է իր գործողությունների հետևանքով առաջացած նյութական վնասի հատուցման պատասխանատվություն:

4.7. Պատվիրատուն հաստատում է, որ Կատարողի կողմից տրամադրվել է «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված հետևյալ տեղեկատվությունը՝

- անձնագրային, մուտքի և ելքի պահանջներ,
- Ժամանման կամ տարանցիկ երկրներում՝ վարակիչ հիվանդությունների, առողջության սպառնալիքների և դրանց կանխարգելման, ինչպես նաև առողջության հետ կապված սահմանափակումների և պահանջների մասին (անհրաժեշտ ներարկումներ և այլն),
- տրանսպորտային տուրքեր և հատուկ գանձումներ,
- ուղևորային փոխադրումների ընթացքում պահանջվող մաքսային սահմանափակումներ,
- դրամային փոխարժեք,
- դժբախտ պատահարների դեպքում, ինչպես նաև առողջության ու կյանքի ապահովագրության հետ կապված պահանջների կամ երաշխավորությունների մասին
- Ժամանման երկրների ազգային սովորույթների, կրոնական ծեսերի, սրբավայրերի, բնության, մշակույթի, պատմության և զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող այլ օբյեկտների, հատուկ պահպանվող հուշարձանների, օրենսդրական, կրոնական պահանջների և արգելքների վերաբերյալ այնպիսի տեղեկատվական նյութեր, որոնք անհրաժեշտ են շրջագայության ընթացքում:

4.8 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ հաստատում են, որ Պայմանագրի 4.7 կետով սահմանված պայմանների խախտման հետևանքով առաջացած անբարենպաստ հետևանքների ռիսկը ամբողջությամբ կրում է Պատվիրատուն:

**5. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ֆորս-մաժոր)**

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավել, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**6. Վեճերի լուծման կարգը**

Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**7. Եզրափակիչ դրույթներ**

- 7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Հավելվածում նշված վերջնաժամկետի ավարտը:
- 7.2. Հյուրանոցային, տրանսպորտային, էքսկուրսիոն, ռեստորանային և այլ ծառայություններ կարող են մատուցվել այլ կազմակերպությունների և/կամ անձանց կողմից, որոնց հետ Կատարողն ունի համապատասխան պայմանագրեր: Համապատասխան պայմանագրով մատուցվող ծառայությունների ոչ պատշաճ կամ թերի կատարման համար պատասխանատվություն է կրում համապատասխան պայմանագրով ծառայություն մատուցող կողմը:
- 7.3. Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 7.4. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն դեպքում, եթե դրանք կատարված են լրացուցիչ համաձայնագրով, գրավոր և ստորագրված կողմերի կողմից:
- 7.5. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ՊՍՏԱՐՈՂ**

**ՊՍՏՎԻԴԱՏՈՒ**

<<Մարուքյաններ>> ՍՊԸ

ՀՀ քաղաքացի՝

Գործ. հասցե՝ ք. Երևան, Աթենքի 3/3  
 Իրավ. հասցե՝ ք. Երևան, Չայկինայի փ., տուն 61  
 ՀՎՀՀ՝ 01833999  
 Բանկ՝ «Հայփոֆինանս» ՓԲԸ Կենտրոն մասնաճյուղ  
 Հ/Հ՝ 1150001537140100  
 E-mail: [marukyanner.llc@yandex.ru](mailto:marukyanner.llc@yandex.ru)  
 Հեռ՝ +374 10 56 27 77 , +374 93 54 03 21

Հասցե՝  
 Անձնագիր՝  
 Տրված՝  
 Սոց. քարտ՝  
 Սոց. փաթեթ՝  
 Բանկ՝  
 Հ/Հ՝  
 Աշխատանքի վայր՝  
 Աշխատավայրի հասցե՝  
 Հեռ.՝

Տնօրեն՝ Մնացական Մարուքյան

ստորագրություն

ստորագրություն

Տ ե ղ ե կ ա ն ք

\_\_\_\_\_ ի ն << \_\_\_\_\_ >> ՍՊԸ-ի միջև << \_\_\_\_\_ >> \_\_\_\_\_ թ. կնքված №  
 զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագիր

Մատուցվող ծառայության տեսակը	
Տարածաշրջանը	
Հյուրանոցային տնտեսության օբյեկտի լրիվ անվանումը	
Հյուրանոցային տնտեսության օբյեկտի գտնվելու վայրը	
Տևողությունը (գիշերների քանակ)	
Ամրագրված սենյակի տիպը և կարգը	
Սենյակում հյուրերի թիվը (չափահաս /երեխա)	
Սենյակում հյուրերի անունները	
Ժամանման տարի, ամիս, օր, ժամ	
Մեկնման տարի, ամիս, օր, ժամ	
Սննդի կազմակերպման և մատուցման ծառայության հաճախականությունը, պայմանները	
Բուժական ծառայություններ	
Շրջագայության երթուղին	
Տեսարժան վայրերի այցելության ծրագիրը, երթուղին	
Տրանսպորտային միջոցների տեսակը	
Փաթեթի գնի մեջ ներառված այլ ծառայություններ	

**Գողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԿԱՏԱՐՈՂ**

<<Մարուքյաններ>> ՍՊԸ

Գործ. հասցե՝ ք. Երևան, Աթենքի 3/3  
 Իրավ. հասցե՝ ք. Երևան, Չայկինայի փ., տուն 61  
 ՀՎՀՀ՝ 01833999  
 Բանկ՝ «Հայրիգնեսարանկ» ՓԲԸ Կենտրոն մասնաճյուղ  
 Հ/Հ՝ 1150001537140100  
 E-mail: [marukyanner.llc@yandex.ru](mailto:marukyanner.llc@yandex.ru)  
 Հեռ.՝ +374 10 56 27 77 , +374 93 54 03 21

Տնօրեն՝ Մնացական Մարուքյան

ստորագրություն

Կ.Տ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ քաղաքացի՝

Հասցե՝  
 Անձնագիր՝  
 Տրված՝  
 Սոց. քարտ՝  
 Սոց. փաթեթ՝  
 Բանկ՝  
 Հ/Հ՝  
 Աշխատանքի վայր՝  
 Աշխատավայրի հասցե՝  
 Հեռ.՝

ստորագրություն

տակարար Իրավ.հասցե Գործ. հասցե Հ/Հ Բանկ ՀՎՀՀ	«Մարուքյաններ» ՍՊԸ ք.Երևան, Չայկինայի փ,տ. 61 ք.Երևան,Աթենքի փ. 3/3 1150001537140100 Հայֆիզնեսքանկ ՓԲԸ 01833999	Փոխանցման հաշիվ № օր « » 2019 թ.
---	--	-------------------------------------

Վճարող Հասցե Հ/Հ Բանկ Անձնագիր	Պայմանագիր/պատվեր № օր « » 2019 թ.
--	--

Լրացում՝

№	Անվանումը	Քանակը	Միավ.	Գինը	Գումարը
1	Սոցիալական փաթեթ				

Վճարման գումարը՝ \_\_\_\_\_  
Ներառյալ ԱԱՀ

Գումարը տառերով՝  
Կ.Տ.  
ՄԱՐՈՒՔՅԱՆՆԵՐ ՍՊԸ  
Տնօրեն \_\_\_\_\_ Մ.Մարուքյան

Գլխավոր հաշվապահ \_\_\_\_\_ Լ. Հովհաննիսյան

Հաճախորդ \_\_\_\_\_